



Հասցե՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 21,
հեռ.՝ +374 11 966868, Էլ. փոստ՝ info@bg.am, կայք՝ www.bg.am

Պողոսյան պարտեզները հանդիսանում է Երևանի Սիրահարների այգու
շահագործողը, որը բարեկարգվել է Պողոսյան հիմնադրամի կողմից:

Այգու դռները բաց են ամենօր ժամը առավոտյան 06:00-ից մինչև գիշերը 02:00-ը (01.12-ից 28.02 մինչև ժամը՝ 01:00-ն):

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Պողոսյան պարտեզները, որպես Երևանի Սիրահարների այգու շահագործող կազմակերպություն՝ ստորև թվարկված Կանոնների շարադրմամբ, Ձեզ տեղեկացնում է այգու տարածքում Ձեր իրավունքների և պարտականությունների մասին: Մուտք գործելով այգու տարածք՝ Դուք համաձայնում եք այս Կանոններին և Ձեզ վրա կտարածվեն դրանցից բխող իրավական հետևանքները:

Սույն կանոնները խախտող անձինք (իսկ երեխաների և կենդանիների դեպքում նրանց ուղեկիցները) կենթարկվեն պատասխանատվության Հայաստանի Հանրապետության վարչական, քաղաքացիական և քրեական օրենսդրությանը համապատասխան:

Երևանի Սիրահարների այգու տարածքում գործող

ԿԱՆՈՆՆԵՐ

Արգելվում է լողալ այգու տարածքում գտնվող ջրավազանում:

Ջրավազանը և ջրային տարածքները լողալու համար նախատեսված չեն և պարունակում են քիմիական նյութեր, որոնք վնասակար են մարդու և կենդանիների առողջությանը:

Արգելվում է մագլցել ջրվեժների, քարե հորինվածքների, ծառերի և բլուրների վրա:

Այգու տարածքում գտնվող ջրվեժները, քարե հորինվածքները և բլուրները դեկորատիվ նշանակություն ունեն և նախատեսված չեն մարդու, նույնիսկ երեխայի, և անգամ կենդանու ծանրության համար: Դրանք կարող են հեշտությամբ վնասվել և վնասել Ձեզ և Ձեր երեխային և/կամ կենդանուն:

Արգելվում է աղտոտել այգու տարածքը:

- Այգու տարբեր մասերում տեղադրված են առանձին՝ ապակու, թղթի, պոլիէթիլենային (պլաստիկ) և այլումիսե տարաների վերամշակման համար նախատեսված հատուկ աղբամաններ: Խնդրում ենք, աղբը նետելիս, գատել այն՝ ըստ համապատասխան աղբամանների:
- Մի շարք սննդի տեսակների, մասնավորապես՝ արևածաղկի և այլ նմանատիպ աղանդերի, օգտագործման դեպքում այգու աշխատակիցները կարող են դիտողություն անել դրանց օգտագործման համար, քանի որ դրանք անկախ Ձեր կամքից կեղտոտում են այգու տարածքը:

- Ակնկալում ենք Ձեր անմիջական մասնակցությունը շրջակա միջավայրի և այգու մաքրության պահպանության գործում:

Արգելվում է վնասել այգու գույքը:

- Խնդրում ենք խնամքով վերաբերվել այգու տարածքում գտնվող գույքին: Այգու գույքին պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման՝ այգու տնօրինության կողմից սահմանված գնացուցակի շուկայական արժեքներին համապատասխան:
- Այգու ողջ տարածքը ազատ է քայլելու և հանգստանալու համար: Հաշվի առնելով այգու պահպանման տեխնոլոգիական միջոցառումները, ինչպես նաև, կախված եղանակից և այլ պահանջներից ժամանակավորապես կարող են ստեղծվել զբոսանքի համար ոչ նպատակահարմար, արգելափակված տարածքներ:
- Խնդրում ենք հարգել նշված գործողությունները և ենթարկվել մուտքն արգելափակող ցուցանակներին:

Արգելվում է կենդանիների մուտքը այգու տարածք:

- Այգու շահագործման առաջին տարվա ընթացքը ցույց է տվել, որ նույնիսկ վզկապով ու դնչկալով կենդանիները զգալի վնաս են հասցնում այգուն և խանգարում մյուս հանգստացողների հանգիստը:
- Ձեր կենդանու կողմից այլ անձանց առողջական վնասվածք պատճառելը քրեորեն պատժելի արարք է, և նման դեպքերում այգու աշխատակիցները իրավասու են դիմել իրավապահ մարմիններին:
- **Ծխախոտի ծխից ազատ գոտի:**
- Այգու տարածքում կան ծխախոտի ծխից ազատ գոտիներ: Դրանք են՝ հանրային զուգարանը և մանկական խաղահրապարակը: Վերջինս հանդիսանում է Երևանի առաջին բացօթյա մանկական խաղահրապարակը, որը կոչվում է “Ուրախ խաղահրապարակ, որտեղ չեն ծխում”, որտեղ ծխելն արգելվում է:
- Մենք հարգում ենք ծխողների իրավունքներն ու խնդրում նրանց՝ հարգել չծխողների իրավունքը և այգու նշված բացօթյա ծխից ազատ գոտում չծխել:

Արգելվում է այգու տարածք մուտք գործել հեծանիվով կամ այլ անիվային շարժական միջոցներով, քանի որ կան բլրակներ, ոչ հարթ ու քարքարոտ ճանապարհներ, որոնք դժվարեցնում են այգում անիվային շարժական միջոցների տեխաշարժը: Այգում անիվային շարժական միջոցներից հնարավոր է վարել միայն մանկական սայլակներ, քանի որ դրանք գտնվում են ծնողների ուշադրության և անմիջական հսկողության ներքո, ինչպես նաև սակավաշարժության խնդիրներ ունեցող այցելուների համար նախատեսված սայլակներ, քանի որ այգում կան որոշ ճանապարհներ, որոնք հարմարեցված են սակավաշարժ մարդկանց համար:

Արգելվում է գնդակով խաղալը, քանի որ այգու ոչ բոլոր տարածքներն են հարթ, իսկ ճեմուղիները նեղիկ են և գնդակ խաղալու համար նախատեսված չեն: Փետրագնդակ (բատմինթոն) խաղալն այգում արգելված չէ, եթե այն խաղում են ոչ խոտածածկ տարածքներում:

Արգելվում է ցանկացած տեսակի ճայթուցիկների կամ այլ պայթուցիկ նյութերի օգտագործումը այգու տարածքում:

Արգելվում է ցանկացած շահույթ հետապնդող գործունեություն իրականացնել այգու տարածքում: Առանց թույլտվության **Նկարահանումներ** իրականացնելը հնարավոր է միայն այն դեպքում, եթե Դուք հանդիսանում եք զանգվածային լրատվամիջոցներից մեկի ներկայացուցիչ և ունեք այդ մասին վկայող փաստաթուղթ: Այդ դեպքում, այգու անվտանգության աշխատակցին մոտենալով, Դուք կարող եք լրացնել մամուլի ներկայացուցիչների համար նախատեսված հայտը՝ հավաստելով, որ նկարահանումը շահույթ հետապնդող չէ, որից հետո կկարողանաք իրականացնել նախատեսված նկարահանումը: Այգում չեն արգելվում նաև սիրողական և հարսանեկան նկարահանումները:

Այգու տնօրինությունը պատասխանատվություն չի կրում՝

- Այգու տարածքում անձնական իրերի կորստի կամ վնասի համար:
- Այցելուների և նրանց երեխաների անվտանգության համար: Երեխաների անվտանգ և ապահով ժամանցի ապահովումը ծնողի (ուղեկցողի) պարտականությունն է:
- Այգու տարածքում գտնվող ջրավազանում լողալու կամ ջրվեժների, քարե հորինվածքների, ծառերի և բլուրների վրա մագլցելու հետևանքով առողջությանը պատճառված վնասի համար:
- Այգու անվտանգության աշխատակիցները կամ այլ աշխատակիցները կարող են օգնություն տրամադրել որևէ մեկին, սակայն դա իրենց անձնական նախաձեռնությունն է, որի համար այգու տնօրինությունը պատասխանատվություն չի կրում:
- Այցելուների կողմից իրեն կամ երրորդ անձանց պատճառած վնասի համար, եթե այն տեղի չի ունեցել այգու աշխատակիցների կամ տնօրինության անմիջական մեղքով:

Այգու տարածքում Ձեր հանգիստն անցկացնելիս խնդրում ենք հաշվի առնել այլ անձանց իրավունքները և ցանկությունները, ինչպես նաև հասարակական կարգի պահպանության կանոնները:

Այգու տարածքում հասարակական հանգստից բացի այլ տեսակի ցանկացած գործունեություն իրականացնելու համար (այդ թվում՝ տեսա և լուսանկարահանումներ, ձայնագրումներ, խմբային հավաքներ և այլն) անհրաժեշտ է ունենալ այգու տնօրինության գրավոր համաձայնությունը: Պայմաններին կարող եք ծանոթանալ մեր համացանցում տեղադրված կայքից (<http://www.bg.am/>), Facebook սոցիալական կայք-էջից www.facebook.com/boghossianguardens) կամ դիմել Տնօրինությանը:

Բոլոր կանոնները տարածվում են նաև այգու աշխատակիցների վրա: Այգու աշխատակիցները այգու տնօրինության լիազորված ներկայացուցիչներն են և իրավասու են հետևել այգու տարածքում կանոնների պահպանությանը, իսկ խախտում նկատելու դեպքում կատարել համապատասխան նկատողություններ և գործողություններ՝ այդ թվում դիմել այգու անվտանգության աշխատակիցներին և/կամ իրավապահ մարմինների ներկայացուցիչներին:

Ակնկալում ենք Ձեր համագործակցությունը և խնդրում ենք պահպանել նշված կանոնները, քանի որ դրանք նախ և առաջ ուղղված են Ձեր հանգստի ապահովմանը:

Ծնորհակալություն:

Պողոսյան պարտեզներ



Address: 21 Marshal Baghramyan Avenue, Yerevan, 0019, Tel: +374 11 966868
E-mail: info@bg.am, Web site: www.bg.am

Boghossian Gardens is the operator of Lovers' Park Yerevan realized by BOGHOSSIAN FOUNDATION.

The Park is open to public every day from 6:00 to 2:00 (from 01.12 through 28.02 from 07:00 to 01:00)

Attention

Herewith the Boghossian Gardens Foundation as the operator of the Lovers' Park Yerevan notifies you of your rights and responsibilities on the park premises. By entering the park you agree to these terms, and their legal consequences will be applicable to you.

Those violating the rules (or, in the case of children and animals, their custodians or those accompanying them) will face prosecution in accordance with the administrative, civil, and criminal legislation of the Republic of Armenia.

Rules within the territory of the Park:

Enter the water is forbidden.

The pond and all other water features have not been designed for swimming and contain chemicals that are dangerous to humans and animals.

Climbing on waterfalls, stone compositions, trees or hills is forbidden.

The waterfalls, stone compositions, and hills in the park have been created for decorative purposes and have not been designed to bear the weight of adults, children, or even animals. They can be damaged easily and may inflict bodily harm to you, your child, or your pet.

Litter in the park is forbidden.

- Appropriate bins for glass, paper, plastic and aluminum are placed in areas around the park. Please sort waste according to the signs on the bins.
- Consumption of foods, in particular, sunflower seeds and similar snacks, which result in litter in the park, is not permitted.
- We expect your active support in the maintenance and cleanliness of the park.

Damaging or defacing the Park or park property is forbidden.

- Please use the park property with care. Compensation for Damaged property shall be sought according to the price list prepared by the park administration or in accordance to market prices.

- While visitors are invited to enjoy the entire premises of the park, they are asked to respect signs, gates, and fences indicating areas that are closed to visitor traffic due to park maintenance or other issues.

The Park is a pet-free zone.

- The park exploitation and maintenance experience has shown that even though pets might wear muzzles, they still often damage the park property and disturb visitors.
- Injury caused by pets is criminally punishable. In such cases the park personnel are authorized to call the police.

The Park is a smoke-free zone.

- There are smoke-free zones in the park: the public toilets and children's playground. The latter is the first smoke-free playground in Yerevan called "Happy Playground where People do not Smoke".
- We respect the smokers' rights and ask them to respect the rights of non-smokers and not to smoke in the above mentioned area of the park.

Bicycles and other wheeled vehicles are not permitted.

As there are small mounds and rocky roads there, these become an obstacle for using wheeled vehicles. It is not forbidden to use baby carts in the park because they are under the parents' direct supervision and attention. It is not forbidden to use wheelchairs in the park either because there are several roads in the park, which are made just for people with disabilities.

Playing ball in the Park is not permitted.

As not all the roads are flat in the park, there are small mounds and rocky trails. The paths in the park are very narrow and are not envisaged for playing a ball. Playing badminton is possible, but not on the grass areas of the park.

Using explosive substances in the park is forbidden.

It is strictly forbidden to use any type of explosive substance on the territory of the park.

Profit making activities are not permitted.

All kinds of profit making activities at Lovers' Park Yerevan are forbidden. It is possible **to implement video or photo shootings** without permission if you are a representative of mass media and have the evidencing document. In this case you should approach to the security guard of the park and fill in the application envisaged for mass media representatives ensuring that the shooting is taken not for profit purposes. Only after this you are able to carry out the shooting. The amateur and wedding shootings are not forbidden.

The Administration of the park is not responsible for:

- Loss or damage to personal property on park premises.
- The safety of visitors and their children. The safety of children within the Park is the responsibility of their parents or those accompanying them.
- Any damages caused to the visitor or a third party not caused by the direct fault of the park personnel or management.

- The security guards and other employees of the park can offer their help at their own volition; the Administration of the park bears no responsibility for inaction.

While relaxing at the park please also take into consideration the rights and needs of other people, as well as the rules of public order. In order to conduct any organized or group activity in the park (video and/or photo shoots, sound recordings, organized group meetings, etc.), it is necessary to obtain written consent of Boghossian Gardens in advance. For the terms and conditions, please refer to our website (www.bg.am), Facebook page (facebook.com/boghossianguardens) or apply to our Administration.

Park personnel must also abide by these Rules. The park employees are the legal representatives of the park administration and are authorized to enforce the rules. In case of violations, they are authorized to issue warnings and take appropriate action, including calling for the security guards of the park and/or representatives of the police.

Some areas of the park are under constant CCTV monitoring in order to improve service quality. We anticipate your cooperation and ask you to abide by the rules, as they have been above all set to ensure your leisure.

Thank you.

Boghossian Gardens